

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ է կատարվում.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Մեր հայուհիները. երկրաշարժից վե-
նալիստների օգտին. Նամակ Թեւազի. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐ
ՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Մեր ուսանողները.

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

Ներկայումս մեր երկրի անտեսական
կեանքում կատարվում են մի շարք փոփո-
խութիւններ, որոնց բնութագրութիւնը դեռ
ևս չեն դարձել լուրջ հետազոտութեան
առարկայ: Անտեսական միջոցների գնները
զգալի կերպով բարձրացել են, բարեկե-
ցութեան պահանջները շատացել են, աշ-
խատանքի աղբիւրները բազմացել են եւ
մի և նոյն ժամանակ մեծացել է աշխա-
տանք որոնողների թիւը: Անտեսական ան-
հրաժեշտ միջոցների գնները բարձրացել
են ոչ միայն արհիւսի քաղաքներում, ինչ-
պէս են Թիֆլիսը, Բաքուն եւ Բաթումը,
այլ և գաւառական փոքր կենտրոններում
և նոյն-իսկ գիւղերում: Թէ այն առարկա-
ները, որոնք արդիւնաբերվում և պատ-
րաստվում են մեր երկրում և թէ նրանք,
որոնք ներմուծվում են ուրիշ տեղերից,
երկաթուղիների և շողանաւերի շնորհիւ,
մշտական մրցութեան մէջ լինելով, կա-
մայ-կամայ ենթարկվում են մեծ վաճա-
ռանքների պայմաններին:

Նոր կեանքը առաջ է բերել բարեկե-
ցութեան նոր պահանջներ և մեր միջին
դասակարգի անհատը ստիպված է այն-
պիսի ծախսեր անել, որոնց մասին նա ա-
ռաջ գաղափար չուներ: Այնպիսի առար-
կաներ, ինչպէս են օրինակ ժամացոյցը,
գիւղը, լրագիրը, թէյը, շաքարը և լու-
սանկարը, վայելու նիւտ և կացը, կրու-
կամ թատրոն յաճախելը, պահանջում են
համապատասխան միջոցներ: Ամեն ոք
աշխատում է մեծ և փոքր չափով դոճա-
նել իր այդ նոր պիտոյքները: Նոյն ձեռ-
քովը նկատվում է և մեր գիւղական աղ-
քաբնակութեան մէջ: Սակայն այդտեղ
պէտք է արձանագրել այն տխուր երեւոյ-

թը, որ այդ ձգտումը շատ դժգոհութեամբ
ոչ միայն չէ խրախուսվում և բաւարա-
րութիւն չէ ստանում, այլ և ընդհակա-
ռակը նա հանդիպում է մի շարք անպի-
սի աննպաստ հանգամանքների ազդեցու-
թեան, որոնք խեղդում են աւելի լաւ
ապրելու յաւանութիւնը գիւղական աղ-
քաբնակութեան մէջ, որովհետեւ նրանց
ապրուստի միջոցները թուլացել են և նա
նոյն-իսկ անկարող է իր առաջվայ կուշտ
և անդորր կենցաղավարութիւնը պահ-
պանել:

Աղքատականութիւնը որոնում է աշխա-
տանք և չը նայելով, որ նրա աղբիւրները
բարձրացել են, դարձեալ որոնում է մեր
երկրի բոլոր մասերում աշխատանք, որով-
հետեւ հին արհեստը և հին երկրագոր-
ծութիւնը այլ ևս չեն մատակարարում
նրա ապրուստի համար բաւականաչափ
միջոցներ, իսկ կարիքները ամեն օր աւելի
ու աւելի մեծ ոյժով բաղխում են աշ-
խատանքի գոնիքը:

Տնտեսական ներկայ փոփոխութիւնների
բնութագրութեան ուսումնասիրութիւնը կա-
րող է պարզել շատ ընթացիկ երեւոյթնե-
րը ևս օրինակ կենցաղում եւ ներքին պատ-
րաստել նպատակայարմար ձեռնարկութիւն-
ների ծրագրերն մշակելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Աշխատանքի ժողովրդի հարցը ժամանակա-
կից առաջնակարգ, ամենից սուր հասարակա-
կան հարցն է: Գիւղական տարրը, իբրեւ այդ
ժողովրդի մէջ ամենամահալին մեծամասնութիւն
կան կազմող մի բազմութիւն, ամեն տեղ մը-
տածողների, մամուլի, հասարակական գործիչ-
ների եւ կառավարչական հիմնարկութիւնների
ուշադրութիւնն է գրաւել: Ուստաստանում մի
քանի քաղաքում է, եւ գործարանական բա-
նուտների շահերը պաշտպանելու համար գո-
յութիւն ունի, ինչպէս յայտնի է, գործարա-
նական տնտեսական հիմնարկութիւնը, որ հակում
է գործարանների վրա եւ պիտի թող չը տայ,
որ գործատէրերի կամայականութիւնը լինի
օրէնք թրտնելով հայ աշխատողների համար:

ուժասպառ անում, միւս կողմից էլ ներթափա-
նի պակասութիւնը: Այսպէս ուժասպառ եղած
օրգանիզմը շատ շուտ ենթարկվում է վատ
կլիմայի ազդեցութեանը, եւ ճիշդ որ շուտով
հիւսնադանում է: Պարզ բան է, որ կան եւ
առողջներ. Դրանք բոլորը լաւ հասկանում են,
որ իրանց տեղը չէ համալսարանը, գիտեն, որ
շատ պակասութիւններ ունեն, բայց ազատվել
չեն կարող: Շատ լաւ գիտեն, որ քիմիկաթութե-
անը անհրաժեշտ է պարագել, գիտեն, որ
բոլորովին զարգացած չեն, բայց այստեղ ար-
դէն ու է, դրա մասին հարկաւոր էր առաջ
մտածել. նրանց գիմնադրւում ոչ ոք ցոյց չէ
տուել, այժմ են միայն գլխի ընկել, բայց հա-
մալսարանում հազիւ հազ հասցնում են իրանց
պարագանքները: Մի քանիսը, ցանկանալով
ուղղել իրանց պակասները, սկսում են կարգալ-
պարագել գրականութեամբ, բայց գործը ա-
ռաջ չէ դնում. առաջին, որովհետեւ մեր գիմ-
նադրները գալիս են համալսարանի բոլորովին
անպատրաստ եւ, ընկնելով գիտութեան ուղիւ-
նուսի մէջ՝ առանց զեկալարի, շատ դժուարանում
են, չը գիտեն ինչին կաշին եւ ինչից սկսեն.
եւ երկրորդ՝ անկարելի է, որ ուսանողը թողնէ
իր մասնագիտութիւնը եւ հետեւէ օրիշ ա-
ռարկաների: Երեւակացե՛ք այն բժիշկ ու-
սանողի դրութիւնը, որը մի կողմից է դնում
բժշկական առարկաները եւ իրաւաբանութեան
ետեւից է ընկնում: Պարզ բան է, որ այդ ու-
սանողը ոչ կարգին բժիշկ է լինելու, ոչ էլ կար-
գին իրաւաբան: Եթէ նա բոլորովին թողնի
բժշկականութիւնը ու պարագի իրաւաբանու-
թեամբ, որով իբր թէ աւելի է հետաքրքրվում,
էլի բան չի դուրս գալ դրանից, որովհետեւ,

Մնում է աշխատանքի մարդկանց մի այլ մեծ
բազմութիւն—արհեստաւորների դասը, որ հա-
մարեա մոռացված է, զեկալարվում է հաւա-
նադ սովորութիւններով եւ չունի պաշտպա-
նութիւն իր դրութիւնը բարեօրէնելու համար:
Այժմ արհեստաւորներն էլ հասկացան, որ ի-
րանք էլ իրաւունք ունեն փոքր ի շատէ բա-
րեկեցիկ լինելու: Պետերբուրգում անցեալ օր
բացվեց արհեստաւորների համագործով, որ
պիտի պարզէ այդ դասակարգի կարիքներն ու
պահանջները: «Кавказъ» լրագիրը այդ առի-
թով մի քանի ուրուագծեր է բերում արհես-
տաւորների ընդհանուր դրութիւնից:

Արհեստաւորի աշխատանքը զուրկ է կա-
նոնաւոր կազմակերպութիւնից եւ կառա-
վարչական հսկողութիւնից, այդ պատճառով
էլ արհեստաւորի աշխատանքը, որ զանազան
դժգոհութեամբ ունի օր ու գիշերվայ մէջ 14—16
ժամի տեւողութիւն,—այս չափազանց ծանր,
տաժանալի աշխատանքը ոչ միայն վատ է
վարձատրվում, այլ և բոլորովին չէ ապա-
նովում արհեստաւորի համեստ գոյութիւնը:
Արհեստաւորներից ամենապարզ ամբար 18—20
րուբլուց աւել չէ աշխատում, իսկ կին ար-
հեստաւորը 10 ռուբլուց աւել չէ ստանում:
Ինքն ըստ ինքեան հասկանալով է, որ այս-
չափ աղքատիկ վարձատրութիւն ստանալով,
արհեստաւորը իր կեանքը ապահոված չէ
կարող համարել եւ այդ կեանքը կախված է
ամեն տեսակ պատահականութիւններից:

Պէտք է աւելացնել դրա վրա եւ այն, որ
արհեստաւորը ապրում է խիստ աննպաստ,
հակառողջական պայմանների մէջ: Յայտնի է,
որ աղքատիկ ապրուստը, միացած այդ պայ-
մանների հետ, կարծում է արհեստաւորի կեան-
քը, քանիցով բազմաթիւ տներ, անբախտա-
նելով հարիւրաւոր մարդկանց, Բայց կայ եւ
աւելի ցաւալի երեւոյթ արհեստաւորների աշ-
խատում. այնտեղ գոյութիւն ունի անչափա-
հաս գերինների մի ամբողջ բանակ: Արհեստա-
ւորների աշակերտներն ու աշակերտուհիները
այդ խեղճ գերիններն են:

Չափաւորների հետ հաւասար աշխատելով,
նեղ, յաճախ մութ արհեստանոցում, ուր պա-
կասում է օդը, գտնվելով վարպետների վատ
ազդեցութեան տակ, այդ աշակերտները դա-
ժան աշխատանքի դպրոցից դուրս են գալիս
բարոյապէս եւ ֆիզիքապէս անդամալուծ-
ված, բազմաթիւ արատաւոր հակամեծերով:
Պատկերը կը լրանայ, եթէ մենք յիշենք,
որ ոչ մի տեղ ծեծը, կոպիտ բռնութիւնները
այնքան օրինական ձեւ եւ լայն չափեր չեն

կրկնում ենք, պատրաստված չէ մեր ուսանողը
այդ գիտութիւնների համար: Կան եւ ուսա-
նողներ, որոնք համարեա թէ մեծամասնութիւն
են կազմում, ընտրելով մի որ եւ է մասնագի-
տութիւն, աւելի շուտ՝ մտնելով մի որ եւ է
բաժին (ֆակուլտետ) պարագում են, ինչքան
կարողանում են, եւ մի կերպ առաջ են տա-
նում իրանց գործը. ազատ ժամերն էլ անհոգ
եւ ուրախ են անցկացնում ու այդպիսով թե-
թեւացնում են ապագայ թշուառութիւնները:
Կան եւ ուսանողներ, որոնք հաշտվում են ի-
րանց վիճակի հետ, հասկանալով, որ իրանք
մեղաւոր չեն եւ համեստօրէն տանում են ի-
րանց պարագանքները:

Այս բոլորը լսելուց յետոյ, ասացե՛ք, ընթեր-
ցող, արդարացի են այն գնադատները, մեղա-
դրանքները եւ պահանջները, որ անում է հա-
սարակութիւնը ուսանողներից: Հասարակու-
թիւնը ինչ ցանկ է, այն էլ հնձում է.—ինչ
տեսակ կրթութիւն է տալիս հասարակութիւ-
նը, այնպէս էլ ուսանողներ են դուրս գալիս:

Այսպէս թէ այնպէս մեր ուսանողը մի կերպ
վերջացնում է համալսարանը. եւ վերոյիշեալ
պայմանների մէջ մեծացած համալսարանաւարտ-
ները կազմում են մեր ինտելիգենցիան: Աւար-
տում է համալսարան, բայց արդեօք իր դիրքին
համեմատ կրթութիւն ունի: Ոչ, կասե՛ք. այդ
ինտելիգենտը մի կերպ աւարտել է իր մաս-
նագիտութիւնը. դա համալսարանաւարտ-մաս-
նագէտ է, բայց ոչ կրթված եւ ոչ զարգացած,
որովհետեւ իր կրթութիւնով խելքով եւ ձեռք
տուժներով բոլորովին հեռու է ինտելիգենտից
—այս բառի բուն նշանակութեամբ: Ուսանողը
աւարտում է բժշկական բաժին եւ մտնում է

ստացած, ինչպէս արհեստաւորների մէջ: Ինչ-
պէս տեսնում էք, շատ խոցելու ու վերքեր ու-
նի արհեստաւոր դասակարգը: Եւ մի մոռա-
նաք, որ մեզ մօտ, Կովկասում, ամառանդ
հայ աղքատականութեան մէջ, արհեստաւորները
քաղաքների բնակիչների մեծ մասն են կազ-
մում: Ստիպողական պահանջ է կանոնաւորել
արհեստաւորի աշխատանքը, ազատել նրան
անգութ շահագործողներից եւ հարստահարու-
թիւններից, արհեստաւորների դպրոցներ հիմնել,
ուր անչափաւոր երեխաները կարող կը լինեն
առանց «ուսանների» բարբարոսական կրթու-
թեան ենթարկվելու՝ սովորել արհեստը եւ դրա
հետ նաեւ գրագիտութիւն: Այդ բոլոր հարցե-
րը զբաղւած են արհեստաւորների ժողովի առաջ:
Խնայելի կերպով մշակել արհեստաւորական
կեանքին ու շահերին համապատասխան ծրա-
գիւղներ, աշխատել որ դրանք իրականանան,
մտնեն կեանքի մէջ—անա ինչ է սպասում ար-
հեստով ապրող բերաւոր մարդկանց բազմու-
թիւնը: Փորձը, որ անում են այժմ արհեստա-
ւորները, առաջինն է, բայց ցանկալի է, որ
նա վերջինն էլ չը լինի: Մի ժողովով չէ կարելի
դատել այն դրութիւնը, որ դարերից մի վեր
ծանրացած է այդ անապահ քաղաքային վրա.
պէտք է շատ աշխատել, պէտք է ուշադրու-
թիւն հրաւիրել, բայց անելով այն բոլոր վեր-
քերը, որոնք ողնաշարում են համեստ աշխա-
տողների բարօրութիւնը: Այս առաջին փորձը
պէտք է լինի եւ մի լաւ դեր, որպէսզի հա-
սարակական կարծիքն էլ իր պարագը կատա-
րէ, ուշադրութիւն դարձնելով մոռացված դա-
սակարգի վրա, ուսումնասիրելով նրա դրու-
թիւնը եւ բարեօրէն միջոցներ գտնելով:

ՄԵՐ ՀԱՅՈՒՆԻՆԵՐԸ

Կարելի է վստահութեամբ ասել, որ չը կայ
աւելի աշխատասէր, սնարար, համեստ եւ մա-
քուր տարր հայ ազգի մէջ, քան հայ գեղջ-
կուհին:

Տղամարդկանց կոպտութիւնը, պանդուխտ
ամուսիններից տարներով մոռացվելը, ծանր
սնային եւ դաշտային աշխատանքը՝ այդ բոլոր-
ը նա անձնագոհութեամբ եւ համբերութեամբ
տանում է իր գաւառիկների սիրոյ համար, իր օ-
ջախը վառ պահելու համար: Նա իր քրտնքով
ոռոգում է հայրենի հողը. նա իր մայրական

կեանքի մէջ, իբրեւ բժիշկ, գործելու. բայց մի-
թէ բժշկին հարկաւոր չէ զարգացում, հարկա-
ւոր չէ գրականութիւն, պատմութիւն եւ այլ
հասարակական գիտութիւններ. միթէ նա հէնց
միայն բժշկական առարկաներով պիտի հետա-
քրքրվի եւ բացի դրանից ուրիշ բան չիմանայ:
Այսպէս եւ իրաւաբանը:
Մենք վերեւում տեսանք, որ անկարելի է,
որ բժիշկը կամ մի ուրիշ բանի ուսանողը մի
կողմ դնէ իր առարկաները եւ ուրիշ բանով
զբաղվի. եթէ պարագում է իր մասնագիտու-
թիւնն է մնում. չէ պարագում՝ նեղ է միւս-
կողմանի մասնագէտ է դուրս գալիս: Այն, մեր
համալսարանաւարտները նեղ մասնագէտ են,
համալսարանը «չիմայրիկ» է պատրաստում:
Մեր համալսարանաւարտ-մասնագէտը դուրս է
գալիս կեանք—այդ կուի դաշտը—գործելու,
այդտեղ նրան սպասում է գոյութեան կռիւը,
մրցումը, որը օրէցօր քանի գնում է, մեծա-
նում է ու լայն ծաւալ ընդունում եւ ինչպիսի
օժտված մեր համալսարանաւարտը, որ կարող
դանայ մրցել ուրիշների հետ: Մենք տեսանք,
թէ գաւառական գիմնադրանք վերջացած հա-
մալսարանաւարտը ինչ է ժառանգել իր պա-
պերից. մենք տեսանք, թէ ինչ պայմանների
մէջ է մեծացել նա, ինչպիսի կրթութիւն է
ստացել նա գիմնադրւելու, համալսարանում
եւ սակայն կեանքը ոչ թէ միակողմանի մաս-
նագէտ, այլ բազմակողմանի կրթված եւ զար-
գացած ինտելիգենտ է պահանջում: Հասարա-
կութիւնը պահանջում է նրանից, որ իր մասին
չը մտածէ, ներթափանի ետեւից չընկնէ, բայց
գոյութեան կռիւն էլ իրանն է պահանջում: Չը
նայած, որ մեր համալսարանաւարտը պատ-

У о у л џ ш.

